Երբեմն մի քանի տարի էր անցնում նշանտվէֆից մինչև պսակադրությունը։ Պսակադրության հետ շաղկապված ծիսակատարություններն են, որ կոչվում են ընդհանուր բառով **ճրսանէֆ**[20], թեև աղջիկն այդ օրերին անվանվում է **ճարքն** և ոչ թե **ճարս**, և միայն երբ նա մտնում է տղայի ընտանիքը և դառնում է նրա անդամ, այն ժամանակ նա դառնում է արդեն **ճարս**[21]։ Այս բոլոր բառերը բնիկ հայկական[22] բառեր են և բացատրվում են **ճարց**՝ հարցնել արմատի օգնությամբ—աղջիկ խնդրել, աղջիկ փնտրել, աղջիկ ուզել, աղջիկ տուն տանել իմաստով։ Այդ բացատրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հարսանիքը հակադրվում է առևանգման սովորությանը, երբ աղջկան ոչ թե ուզում էին, այլ փախցնում։

Հրսանէֆը կատարվում էր սովորաբար աշնանը կամ ձմեռը, երբ գյուղական աշխատանքները վերջացած էին լինում։ Բուն **ճրսանէֆը** տևում էր երեք օր, ընդհանրապես սկսում էին ուրբաթ օրը և վերջացնում կիրակին։ Հարսանիքից առաջ նախնական պատրաստություններ էին տեսնվում։ Աղջկա տիրոջ հետ տղայի ծնողները համաձայնեցնում էին **ճրսանէֆի** օրը, սակարկելով թե՝

ինչքա՞ն դրամ տղայի տերը պիտի վճարի **ծծագին** հարսնացուի մորն իբրև վարձատրություն աղջկանը նրա տված կաթի փոխարեն.

ինչքա՞ն մթերք պիտի ուղարկվի տղայի տնից հարսանիքի ծախսերը ծածկելու համար.

ինչքա՞ն **ճարսնէվօր** պիտի բերվի աղջկա կողմից.

վերջնականապես պարզվում էր, թե աղջկա տերը ի՞նչ օժիտ է տալու։

Այս բանակցությունները կատարվում էին աղջկա տիրոջ տանը երկու կողմերի մերձավոր ազգականների մասնակցությամբ, հաճախ նաև **ֆավօրի**։ Այդ **ըրնճապա** կտրելու, այսինքն՝ աղջկան տանից **ճանապարճ դնելու**[23] երեկոյան հացը, խմիչքը՝ գինին և օղին պիտի լիներ կրկին տղայի տնից[24]։

Հարսանիքից առաջ նախապատրաստում էին տղային և աղջկան։ Աղջկա տանը ամեն ինչ կարգի էր բերվում, նախ և առաջ նրա **պյաժինֆը**, **բաժինֆը**՝ օժիտը, որի մեջ լինում էր անպատճառ ապագա զույգի անկողնու սարքը՝ հատակին փռելու կապերտ կամ գորգ, ներքնակ, վերմակ, երկու բարձ, **փրղաֆօղ**, **փարդայի**՝ վարագույրի քող և ապա նաև նոր տնտեսության համար անհրաժեշտ սարքավորում—պղնձե ամաններ, **սուփրա**, **բղաֆսակ**, **տաշտի մէցար**՝ սփոց, օժիտը փոխադրելու **խուրջին** և **մաֆրաշ** և այլն։ Այսպիսով շեշտվում էր, որ անկողին պատրաստելը աղջկա կողմիցն էր։ Հարսանիքից մի քանի օր առաջ ազգական կանայք բերելով իրենց հետ **յէղանի**, մեղրով ու կարագով խառնված՝ հավաքվում էին հարսնացուին լողացնելու։ Աղջկա օժիտի մեջ երբեք չէր տրվում կով, որ տանից երկու էգ դուրս չգա։

Հարսանիքի օրը տան մի անկյունը առանձնացվում էր վարագույրով՝ **փա՛րդայավ**, որի գլուխը զարդարված էր լինում լայն ծոպավոր ձեռագործ ժապավենով։ Մեր Պետական թանգարանի ազգագրական բաժնում ունեցած այդպիսի ժապավենից կախված են **աչֆօլօնֆնէր**՝ չար աչքից պահող հմայիլներ

---

20 *Մեղրում*՝ **ճրսա՛նէֆ**, *իսկ* **ճրսա՛նէֆ** *անելուն ասում են*՝ **ծըխկըցա՛նիլ**։

21 *Մեղրում*՝ **ճա՛րսնը**։

22 Աճառյան Հ., *Հայերէն արմատ. բառարան, հ. III, էջ 193—199։*

23 *Վարանդայում ասում են*՝ **ճղէ՛**, *այսինքն*՝ **ուղի կտրել**։

24 **Խօնչանէրի** *հետ էլ անպատճառ տղայի կողմից լինում էր գինի և օղի և գրեթե միշտ խնձոր ու նուռ, իսկ* **դարձի** *հետ աղջկա կողմից երբեք գինի և օղի կամ խնձոր և նուռ չէր լինում։*